Հավատքի կաթիլներ

Հակոբը խնդիր ուներ. նա միշտ անչափ քնկոտ էր:

Պոլյանա Մատոս Վեչիո
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել Բրազիլիայում:

«Հակոբ, դու գիտե՞ս պատասխանը», - հարցրեց տիկին Լելիսը:

Հակոբը բացեց աչքերը և գլուխը բարձրացրեց նստարանից: Բոլոր դասընկերները նրան էին նայում: Ուսուցչի հայացքը ևս սևեռված էր նրա վրա: Նա զգաց, որ կարմրեց: Նա կրկին քնել էր դասարանում:

«Կներեք, տիկին Լելիս»,- ասաց նա: «Կներեք, կարո՞ղ եք կրկնել հարցը»:

«Իհարկե: Բայց, խնդրում եմ, այլևս մի քնիր դասարանում»:

Նա կծկվեց իր տեղում: «Այո, տիկին»:

Հակոբը իր նոր դպրոց եկել էր ընդամենը մի քանի շաբաթ առաջ: Նա սիրով էր սովորում և ուներ լավ դասընկերներ: Սակայն մեկ խնդիր կար. նա միշտ անչափ քնկոտ էր: Նրա նոր դպրոցը հեռու էր, ուստի նա պետք է շատ շուտ արթնանար՝ ժամանակին այնտեղ լինելու համար:

Սկզբում հեշտ էր դասարանում կենտրոնանալը: Բայց գնալով ավելի ու ավելի էր դժվարանում: Երբեմն Հակոբն այնքան էր հոգնում, որ քնում էր:

Հաջորդ օրը դպրոցի տնօրենը իր մոտ հրավիրեց Հակոբին և նրա ծնողներին: Նա ժպտաց և հրավիրեց նրանց իր աշխատասենյակ:

«Ուրախ եմ, որ այստեղ եք», - ասաց նա: «Հակոբը հրաշալի աշակերտ է: Բայց նրա ուսուցիչն ասում է, որ նրան չեն հետաքրքրում իր դասերը: Երբեմն նա չի կենտրոնանում և շատ հոգնած է թվում: Նրա մոտ ամեն բան կարգի՞ն է»:

Նրա մայրը գլխով արեց: «Հակոբը ջանասիրաբար աշխատեց, որ կարողանար այս դպրոցը գնալ, բայց այն մեր տնից հեռու է: Նա պետք է ամեն օր շուտ արթնանա: Ուստի, առավոտյան դասերին նա նստում է քնաթաթախ վիճակում»:

ԴԱՆԵԼԸ՝ ՌԱՖԱԷԼ ՄԱՐՏԻՆԻ

«Օ, դա՞ է ողջ խնդիրը»,- ասաց տնօրենը: «Դուք պետք է փորձեք սուրճի կաթիլներ: Ամեն առավոտ Հակոբի ըմպելիքի մեջ մի քանի կաթիլ շատ թունդ սուրճ լցրեք: Դա նրան արթուն կպահի»:

Հակոբը խոժոռվեց: «Բայց մեր ընտանիքը սուրճ չի խմում, տիկին»:

Տնօրենը շփոթված տեսք ուներ: «Քեզ համար դժվար կլինի սովորել, եթե շարունակես քնել: Դու պետք է առնվազն մտածես այդ մասին»:

Երբ նրանք դուրս եկան տնօրենի գրասենյակից, Հակոբի մտքերը խառնվել էին: Նա ցանկանում էր ավելի լավ սովորել դպրոցում, բայց ցանկանում էր նաև հետևել պատվիրաններին:

Այդ գիշեր նրա ընտանիքը սուրբ գրություններից կարդաց Իմաստության խոսքի մասին:

Երբ հերթը հասավ Հակոբին, նա կարդաց. «Եվ բոլոր սրբերը, ովքեր հիշում են, որ պահեն և կատարեն այս ասածները, . . . կգտնեն իմաստություն և գիտության մեծ գանձեր: Եվ կվազեն ու չեն հոգնի, և կքայլեն ու չեն նվաղի»:*

Ապա նրա մոտ մի միտք ծագեց:

Նա կանգնեց նստած տեղից: «Սուրճի կաթիլների փոխարեն ես կօգտագործեմ հավատքի կաթիլներ»:

«Ի՞նչը նկատի ունես»,- հարցրեց նրա հայրը:

Հակոբը ժպտաց: «Ամեն առավոտ նախաճաշից առաջ մենք կարող ենք աղոթել և խնդրել Երկնային Հորը օրհնել ինձ, որպեսզի ես այդքան քնկոտ չլինեմ: Մեր աղոթքները նման կլինեն հավատքի կաթիլների»:

Մայրիկն ու հայրիկը նույնպես ժպտացին: «Դա հիանալի գաղափար է», - ասաց հայրիկը:

Հաջորդ առավոտ նրանց ընտանիքը ծնկի իջավ և աղոթեց, որ Հակոբը արթուն մնալու եռանդ ունենա: Հաջորդ օրը նրանք նորից նույնը արեցին: Մյուս օրը նույնպես: Ամեն գիշեր Հակոբը փորձում էր նաև շուտ քնել: Եվ ամեն առավոտ Հակոբի ընտանիքը հավատ ուներ, որ Երկնային Հայրը կօգնի նրան:

Ժամանակի ընթացքում նրանց հավատքի կաթիլները գործեցին: Հակոբը կարողանում էր կենտրոնանալ ողջ օրվա համար: Աստված պատասխանել էր նրանց աղոթքներին: Եվ Հակոբը գիտեր, որ Նա հպարտանում էր իրենով՝ Իմաստության խոսքին հետևելու համար:

«Պատրա՞ստ ես դասին, Հակոբ»: Տիկին Լելիսը հարցրեց մի առավոտ, երբ նա մտնում էր դասարան:

Հակոբը գլխով արեց լայն ժպիտը դեմքին: Նա իր հավատքի կաթիլները ստացել էր դպրոցից առաջ: Նա պատրաստ էր ամեն ինչի: ●

Ի՞ՆՉ Է ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ:

Իմաստության խոսքը պատվիրան է, որն Աստված տվել է՝ Իր զավակներին օրհնելու համար (տես Վարդապետություն և Ուխտեր 89): Այն մեզ հուշում է, թե որ մթերքներն են լավ ուտելու համար, և որոնցից պետք է խուսափել: Երբ մենք հետևում ենք այս պատվիրանին, մենք օրհնվում ենք առողջությամբ, ուժով և իմաստությամբ:

**Վարդապետություն և Ուխտեր 89.18-20*